

Ցուցումներ շրջանի ամփոփ տեղեկագրի լրացման վերաբերյալ

1. Շրջանի ամփոփ տեղեկագիրը (**Ձև N 4**) լրացնում է ԱՀ շրջաններում և Ստեփանակերտ քաղաքում ԳՀՀ աշխատանքները համակարգողը՝ տարածքային բաժնի պետի մասնակցությամբ՝ գյուղատնտեսական համատարած հաշվառման նյութերն ընդունելուց հետո:

Եթե շրջանի մեջ մտնում են և՛ քաղաքային, և՛ գյուղական համայնքներ, ապա լրացվում են երկու ամփոփ տեղեկագրեր՝ մեկը քաղաքների, մյուսը՝ գյուղերի համար:

2. Շրջանի ամփոփ տեղեկագրում տեղեկությունները լրացվում են ըստ յուրաքանչյուր քաղաքային կամ գյուղական համայնքի:

3. Եթե քաղաքային կամ գյուղական համայնքը բաժանված է երկու և ավելի հաշվառման տեղամասերի, ապա սկզբում գրառվում են տվյալ համայնքի յուրաքանչյուր հաշվառման տեղամասի հանրագումարներն ըստ հաջորդականության, այնուհետև՝ տվյալ քաղաքային կամ գյուղական համայնքի հանրագումարներն ամբողջությամբ:

4. Եթե հաշվառման տեղամասի մեջ ներառված են մի քանի քաղաքային կամ գյուղական համայնքներ, ապա սկզբում լրացվում են քաղաքային կամ գյուղական համայնքի վերաբերյալ հանրագումարները, այնուհետև՝ հաշվառման տեղամասի հանրագումարները:

5. Եթե քաղաքային համայնքի ենթակայության տակ կա(ն) գյուղական բնակավայր(եր), ապա այդ բնակավայր(եր)ի տվյալները պետք է ներառվեն գյուղական ամփոփ տեղեկագրում:

Այդպիսի դեպքերի համար կատարվում է համապատասխան գրառում քաղաքի համար կազմված ամփոփ տեղեկագրի դիմային էջի «Ծանոթություն» տողում:

6. Շրջանի ամփոփ տեղեկագիրը (**Ձև N 4**) կազմվում է հաշվառման տեղամասերի (**Ձև N 3**) ամփոփ տեղեկագրերի համապատասխան տվյալների հիման վրա, ընդ որում **Ձև N 4**-ի՝ «Հաշվառված է հաշվարարների կողմից» 1-ին բաժնում պետք է գրառվեն **Ձև N 3**-ի 1-ին բաժնի տվյալները, իսկ 2-րդ բաժնում՝ «Հանրագումարը՝ հաշվի առնելով վերահսկիչ շրջայցը»՝ **Ձև N 3**-ի 2-րդ բաժնի տվյալները:

7. Շրջանի ամփոփ տեղեկագրի՝ «Վերահսկիչ շրջայցի արդյունքների ամփոփագիր» բաժինը լրացվում է հաշվառման տեղամասերի ամփոփ տեղեկագրի համապատասխան տվյալներն ամփոփելով:

8. Կազմված ուղեկցող թերթերի ընդհանուր քանակի վերաբերյալ տվյալները ստացվում են **Ձև N 3**-ի համապատասխան տվյալներն ամփոփելով:

9. Համոզվելով, որ փաստաթուղթը ճիշտ է կազմված՝ ԱՀ Ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի շրջանային բաժնի պետը/ ԱՀ ԱՎԾ ԳՀՀ վարչության ԿԱԲ պետը(այսուհետ՝ բաժնի պետ) գրում է ամսաթիվը և ստորագրում այն:

ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
Արցախի Հանրապետության 2020 թվականի
գյուղատնտեսական համատարած հաշվառում

Հաստատված է
Արցախի Հանրապետության
վիճակագրության պետական խորհրդի
2020 թվականի _____ -ի N _____ - Ա որոշմամբ

քաղաքային

Ձև N 4-----*(ընդգծել)*

գյուղական

Շրջանում ներառված հաշվառման տեղամասերի քանակը

Ա Մ Փ Ո Փ Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ՇՐՋԱՆԻ

Շրջան-----

ՎԵՐԱՀՄԿԻՉ ՇՐՋԱՅՑԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Գյուղատնտեսական համատարած հաշվառման ժամանակ հաշվարարի կողմից սխալ գրառումներ են կատարվել տնտեսության գյուղատնտեսական նշանակության հողերի և/կամ գյուղատնտեսական կենդանիների վերաբերյալ տեղեկատվության լրացման ժամանակ											
Գյուղատնտեսական նշանակության հողեր, <i>հա</i>						Գյուղատնտեսական կենդանիներ, ընդամենը <i>գլուխ</i>					
Վարելա- հող	Պտղա- տու այգի	Հատա- պըտ- ղանոց	Խաղողի այգի	Խոտ- հարք	Արոտա- վայր	Խոշոր եղջերավոր կենդանիներ	որից՝ կովեր	Խոզեր	Ոչխար- ներ	Այծեր	Թռչուն- ներ
<i>1.</i>	<i>2.</i>	<i>3.</i>	<i>4.</i>	<i>5.</i>	<i>6.</i>	<i>7.</i>	<i>8.</i>	<i>9.</i>	<i>10.</i>	<i>11.</i>	<i>12.</i>

Ընդամենը կազմվել է Ուղեկցող թերթ (Ձև N 5)-----

Ծանոթություն-----

